Известия АН Армянской ССР, Науки о Земле, 6, 92–93, 1971.

НАУЧНАЯ ХРОНИКА

Գ. Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ 13-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍԸ

Մոսկվայում 1971 թ. օգոստոսի 18—24-ը տեղի ունեցավ գիտության պատմությանը նվիրված Միջազգային 13-րդ կոնգրեսը։

Կոնգրեսին 41 երկրներից մասնակցում էին մոտ 1800 գիտնականներ՝ Մեծ Բրիտանիա՝ 64, Լեհաստան՝ 82, ՍՍՀՄ՝ 1050, ԱՄՆ՝ 201, Ֆրանսիա՝ 72, ԳՖՀ՝ 50, ինչպես նաև Կանադայի, Ռումինիայի, ԳԴՀ-ի, Չեխոսլովակիայի, Ճապոնիայի և այլ երկրների ներկայացուցիչներ։

Կոնգրեսը քննարկեց գիտության պատմությանը նվիրված ամենաբազմազան հարցեր։ Գործում էին 14 կոլոքվիումներ և 12 սեկցիաներ ու 13 ենթասեկցիաներ, այդ թվում՝ «Գիտություն գիտությունների մասին և գիտության պատմությունը», «Գիտնականի անձը գիտության պատմության մեջ», «Միջնադարյան գիտությունը՝ Արևելքի և Արևմուտքի փոխհարաբերությունները», «Գիտության և տեխնիկայի պատմության ընդհանուր պրոբլեմները», «Գիտական ուսումնասիրությունների կազմակերպման պատմությունը» կոլոքվիումները և մաթեմատիկայի, ֆիզիկայի, մեխանիկայի, քիմիայի և այլ գիտությունների պատմության գծով սեկցիաները։

Երկրի մասին գիտությունների սեկցիան իր աշխատանքները տանում էր երկու ենթասեկցիաներում՝ աշխարհագրության ու օվկիանոսագիտության պատմության և երկրաբանության պատմության։

Կոնգրեսի բացումը տեղի ունեցավ Մոսկվայի համալսարանի նիստերի դահլիճում, օգոստոսի 18-ին, առավոտյան ժամը 10-ին։ Բացման խոսքով հանդես եկավ ակադեմիկոս Բ. Մ. Կեդրովը։ Կոնգրեսի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին «Գիտության պատմությունը և նրա մշակման սկզբունքները» զեկուցումը։ Զեկուցողը շոշափեց բազմաթիվ հետաքրքիր հարցեր։ Հիմնական եզրակացություններից մեկն այն էր, որ «իմանալով անցյալը, կարելի է ճիշտ կողնորոշվել ներկայում և կանխատեսել ապագան»։

Երկրի մասին գիտությունների պատմության սեկցիան ընդունել էր 79 զեկուցում։ Ժամանակի սղության և այլ պատճառներով սեկցիայում քննարկման դրվեց միայն 45-ը, մնացած 34 զեկուցումները թեզիսների ձևով տպագրվեցին կոնգրեսի «նյութերում»։

Քննարկման դրված զեկուցումների մի մասը լսվեց հեղինակների բացակայության պատճառով։

Աշխարհագրության և օվկիանոսագիտության ենթասեկցիայում լսված զեկուցումներից մեծ հետաքրքրություն առաջացրեց ենթասեկցիայի դեկավար, ակադեմիկոս Ի. Պ. Գերասիմովի զեկուցումը՝ «Համաշխարհային աշխարհագրության զարգացումը ըստ Միջազգային աշխարհագրական կոնգրեսների նյութերիս թեմայով (Ա. Ա. Մինցի և Վ. Վ. Աննենկովի հետ համատեղ), Ֆ. Պինշեմելի (Ֆրանսիա) «Աշխարհագրության պատմությունը աշխարհագրական Միջազգային կոնգրեսների աշխատություններում», ինչպես նաև Վ. Ս. Պրեոբրա-

ժենսկու զեկուցումը՝ նվիրված աշխարհագրության պատմությանը որպես գիտական դիսցիպլինի, և նրա խնդիրներին։

Մեր հանրապետությունից Երկրի մասին գիտությունների պատմության սեկցիայում ընդունվել էր 8 զեկուցում, որոնցից քննարկման դրվեց մեկը՝ Ա. Բ. Բաղդասարյանի ու Ա. Ա. Ասլանյանի «Աշխարհագրությունը և աշխարհագրական գիտելիքները վաղմիջնադարյան հայկական պատմագրության մեջ» զեկուցումը։ Հեղինակները նշեցին, որ հայ պատմիչների՝ Ագաթանգեղոսի, Եղնիկ Կողբացու, Ղազար Փարպեցու և հատկապես Մովսես Խորենացու աշխատությունները պարունակում են բազմաղան աշխարհագրական նյութ։ Հատուկ ուշադրություն դարձվեց «Աշխարհացույցի» և Անանիա Շիրակացու աշխատությունների վրա։

Երկրի մասին գիտությունների պատմության սեկցիայի կողմից ընդունվել և թեզիսների ձևով տպագրվել են նաև մեր հանրապետությունից՝ Գ. Ս. Աբրահամյանի, Լ. Ա. Ավագյանի, Ա. Ա. Ասլանյանի, Է. Գ. Մալխասյանի, Ս. Ս. Մկրտչյանի, Կ. Ա. Մկրտչյանի և Մ. Մ. Խաչատրյանի զեկուցումները։

Սեկցիայում քննարկվող բոլոր զեկուցումների շուրջը կատարվեց մտքերի աշխույժ փոխանակություն։

Կոնգրեսի եզրափակիչ պլենար նիստը տեղի ունեցավ օգոստոսի 24-ին, Մոսկվայի համալսարանի նիստերի դահլիճում։